

պատճառաւ, դաշնագիրը կնքող տէրութեանց այդ նկատմամբ մինչև ցարդ բան մը չէր ծանուցած: Իսկ այժմ կայսերական կառավարութիւնն այս մասին Պէթըր փաշայի և այլ պաշտօնատարաց ձեռամբ պէտք եղած քննութիւններն ամբողջացուցած լինելով, որոշած է հետեւեալ բարենորոգումներն ի գործ դնել:

Ա.—Ժողովրդեան ապահովութիւնն երաշխաւորելու համար Սարնոյ, Սանայ, Բաղէշի և Տիարաքէրի նահանգաց մէջ դատարանք առաւել ևս պիտի բարենորոգին և լաւագոյն կազմաւորութիւն մը պիտի ստանան: Միւշիկ մ'այս գործին համար պիտի նշանակուի:

Բ.—Այսերական կառավարութիւնը տէրութիւններէն խնդրուելիք երաշխաւորութեան տրուելուն թուականէն հաշուելով երեք ամսուան պայմանաժամով մէջ, յիշեալ նահանգաց ներքին խաղաղութեան պահպանութեանը բաւական լինելիք ոստիկան զինուորութիւն (ժամաւորման) և ոստիկանութիւնը (Բոլիս) պիտի կազմէ:

Գ.—Ոստիկանութեան Այս պէջի կոչուած մեծ հրամատարները պատերազմական նախարարութեան պիտի անուանին: Իսկ ոստիկանութեան միւս սպայք, մասնաւոր կանոնադրոյն համեմատ, Այս Մէճիկիսի կոչուած խորհուրդներէն պիտի ընտրուին, և կուսակալաց առաջարկովը պատերազմական նախարարութեան պիտի անուանին: Առաւելաբ ընականաբար արտօնութիւն պիտի ունենան ոստիկանական զօրութիւնը նահանգին մէջ իրենց ուղած տեղերը գործածել, և երբ անկարող Այս Պէյիկուն և ուրիշ սպայից պաշտօնանկութիւնը խնդրեն, պատերազմական նախարարութիւնը պիտի ընդունի նոցա խնդիրը:

Դ.—Նահանգներու (գիւղական) կազմութեան համար Բ. Դրան (Ապէտին փաշային) յուլիս 5 թուականու ծանուցագրոյն մէջ բացատրուած դրութիւնը կայսերական կառավարութեան շահուց համաձայն կերպիւ չորս ամսուան պայմանաժամով մէջ ի գործ պիտի դրուի:

Ե.—Արդիւշտիւ նահանգաց մէջ, մաքսատուրքն, անուղղակի տուրքերը, հեռագրատան և թղթատարութեան հասցիներն ի բաց առեալ, մնացեալ եկամուտներէն նախ իւրաքանչիւր նահանգի պաշտօնատարաց ամսականներն և ուրիշ վարչական կարեւոր ծախքերը պիտի տնօրինուին: Մնացած հասցիքէն 100-ին 10-ը հասարակային կրթութեան և հանրօգուտ շինութեանց պիտի յատկացուի, իսկ 100-ին 90-ը Ա. Պոլիս պիտի զրկուի:

Զ.—Նահանգային պաշտօնատարաց մէջ գտական պաշտօնատարաց ընտրութիւնն և անուանումը մասնաւոր կանոնադրոյն համեմատ ի գործ պիտի դրուի: Բազմաթիւ պաշտօնատարաց ընտրութիւնն և անուանումը կուսակալաց առաջարկութեան վրայ կայսերական Իրատէով պիտի կառավորուի: Բայց Միւշիկաբերդներէ (կառավարիչ), Տէֆէրտարներէ (հաշուակալ) և Մէթըմպիներէ (առաջին քարտուղար) գտա միւս պաշտօնատարաց փոփոխումն և նշանակումը, մասնաւոր կանոնաց սահմանին մէջ, կուսակալաց ձեռնահասութեան կը վերաբերի: Յիշեալ նահանգաց մէջ պաշտօն վարելիք անձանց յի կարողութիւնն, ու պարիտիւնութիւնն ի նկատ պիտի անուանին, և Պէյիկի դաշնագրին 62-րդ յօդուածին և տէրութեան ներկայ օրինաց համեմատ, այդ հանգամանքներն ունեցող ամեն կարգի հպատակներէ պաշտօնատարներ պիտի անուանուին:

Է.—Ներքին գաղափարաց մէջ Մէթըմպիներ և տէրութեան ուրիշ կանոնադրերը կիրարկութիւն պիտի ունենան:

(Մ. Ս. Ս.)

ՅԲԱՆՍԻՆ

Ըրդիրներէ մէջ կարգում ենք հետեւեալ թղթագրութիւնը Փարիզից: Արմենիաների և բարնաբնակի արտաքսերը նոյն հետեւանքներէ հասցնում, ինչ որ եղբայրների արտաքսերը. ամեն տեղ վնասված միաբանութիւնները դատ են սկսում պրեֆեկտներին, պոլիցիական կոմիսարներին և վարչութեան այլ ներկայացուցիչներին դէմ, որոնք մասնակցել են նրանց բնակարանների իրաւունքների խախտելուն: Ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ պրոկուրորները, նրանց օգնականները և հաշտարար դատարանները խումբերով հրաժարականներ են տալիս, որպէս զի կառավարութեան հրամանները կատարելու ժամանակ պատասխանատու չը դառնան օրէնքը խախտելու համար: Առաջվայ պէս կառավարութիւնը դրանց հրաժարման խնդիրները չէ ընդունում և ծառայութիւնը թողնել ցանկացողներին արձակում է խումբերով: Հետաքրքիր է այն իրողութիւնը, որ ծառայութիւնը թողնող պրոկուրորներից շատերը նշանակված են 1880 թուականին արդարութեան այժմեան մինիստրից:

Պոլիցիականներն էլ վախենում են դանդաղանքից և աւելի լաւ են համարում թողնել ծառայութիւնը: Պրանսիական օրէնքները իրականք են տալիս վարչութեան պատճառով վնաս կրողներին կամ բռնութեանը ենթարկվածներին դանդաղել 30 տարվայ ընթացքում և բաւականութեամբ պահանջել: Իսկ այդ 30 տարիների ընթացքում քանի անգամ կարող է փոփոխվել Պրանսիական կառավարչական ձեւը: Պրեֆեկտներից շատերը բաւական կարողութիւն ունենալով, երկիւղով են նայում իրանց սպառնացող հալածանքին:

Մի քանի քաղաքներում հոգեւոր միաբանութիւնների արձակելը տեղիք տուց անկարգութիւններին: Բնենի մէջ հարկաւոր եղաւ զօրքեր հրաւիրել ամբար հետեւանքները համար, որ հաւաքվել էր կարմիրներին պաշտպանելու նպատակով:

Երկն երեք օր է, որ Մարսիլի մէջ ամբար չըջացաւ և կապուցիւնների վնասք և պոլիցիային թող չէ տալիս մտնել ներս: Երեւի այդտեղ էլ զօրքեր հարկաւոր կը լինեն: Մոսկովիէ մէջ գլխաւորութեամբ եպիսկոպոսը մտաւ պրեֆեկտի գրասենյակը և յայտնեց նրան եկեղեցուց մերժված: Բօրթօի, Փարիզի և ուրիշ քաղաքների մէջ ուսումնարանական տեսուչները հրաման ստացան մտնել եղբայրների նախկին ուսումնարանների մէջ և դասատուներին ընել: Որտեղ կը գտնվեն նախկին ուսուցիչները, տեսուչները պէտք է կազմեն պրոսոփօյներ, իսկ յետոյ ակադեմիական խորհուրդը նրանց հետեւանքները համար հարկաւոր կարգադրութիւններ կը տայ: Բացի այդ եթէ վախճանից մէկի մէջ պոլիցիան գտնուի օտարահպտաններին, իսկոյն հրամայում է նրանց 24 ժամվայ ընթացքում հեռանալ Պրանսիայից: Այս պէս պիտի պատկերէ ներկայացնում Պրանսիական կառավարութեան գործունէութիւնը արդիւրեւ միաբանութիւնների վերաբերութեամբ:

Ըրդիրների մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Աւստրիական կայսր Պրանց Յովսէփի դահական ծառի այն մասը, որ յիշում է արեւելեան դժուարութիւնները, չափազանց ճարպիկութեամբ է կազմված: Արքայազն հետեւորը կարողացաւ մի քանի օրոշ նախադատութիւններ ասել: Աւստրիական զբաղեցնող զինաւոր հարցի մասին և մի և նոյն ժամանակ պահպանել իր գործողութիւնները ազատութիւնը Արեւելքի մէջ: Այն նախադատութիւնը, թէ «չը նայելով ժամանակաւոր դժուարութիւններին, Աւստրո-Ունգարիայի յարաբերութիւնները միւս բոլոր պետութիւնների հետ բարեկամական են», ասված է ունգարացի թիւրքապետների համար, որոնք չափազանց վրդովւում են, երբ մտածում են, թէ Աւստրո-Ունգարիան, միանալով միւս պետութիւնների հետ, կարող է ստիպել Թիւրքիային հնազանդել Աւստրո-յի կամքին: Այդ նախադատութիւնից յետոյ կայսրը ասում է, որ ինքը ամեն միջոցներ գործ կը դնի խաղաղութիւնը և իր երկրի շահերը պաշտպանելու համար: Այս նախադատութեանը դիմամբ երկրի միտք է տուած:

Թիւրքիայի կուսակիցները, որոնք հաւատացած են, թէ Աւստրո-Ունգարիայի շահերը պահանջում են Թիւրքիայի ամբողջութեան պահպանելը, կարող են այդ նախադատութիւնը այնպէս մեկնել, որ աւստրո-ունգարական կառավարութիւնը պատրաստ է զոհել Բերլինի դաշնագրի դեռ ևս չերազոյցված մի քանի վիճաններ, եթէ այդ հարկաւոր կը լինի Թիւրքաց կայսրութիւնը ազատելու համար: Իսկ այն շրջանները, որոնք կամեւում են Բալկանեան թերակղզու արեւմտեան մասը միացնել Աւստրո-Ունգարիայի հետ, կարող են մտածել, որ կայսրը ակնարկում է Թիւրքաց կայսրութեան բաժանման վրա: Աւստրո-Ունգարիայի շահերի համեմատ: Այս շրջանների համար հետաքրքիր է նոյնպէս և այն իրողութիւնը, որ կայսրը ասաց, թէ գործերի դրութիւնը Բօսնիայի և Հերցեգովինայի մէջ բաւականացուցել է, թէ այդ նահանգների մէջ եղած աւստրիական զօրքերի թիւը փոքրացրած է և վարչական ծախսերն էլ պակասեցրած են:

Եւելի հիմնաւոր կը լինի այն ենթադրութիւնը, որ կայսրի դահական ծառի միջոց է տալիս աւստրիական կառավարութեանը պահպանել գործողութիւնների ազատութիւնը, որովհետեւ այժմ ինքը կառավարութիւնը չը գիտէ, թէ արեւելեան գործերի մէջ ինչպիսի նախագծի պէտք է հետեւել: Աւստրո-Ունգարիական կուսակցութիւնների դրութիւնը այնպէս է, որ այդ հարցը դեռ ևս անհասարկ է վճռել: Տաաֆէի մինիստրութիւնը, փորձելով հաշտեցնել գնազան կուսակցութիւնները, այն հետեւանքի հասաւ, որ գրգռեց իր դէմ թէ գերմանական սահմանադրական կուսակցութեանը և թէ լեհացիներին: Աւստրիական բոլոր կուսակցութիւնները սպասում են ունգարացիների օգնութեանը, և նայելով թէ ունգարացիները որ կուսակցութեան հետ կը միանան, Աւստրո-Ունգարիայի քաղաքականութիւնը բացարձակ կամ թշնամական կը լինի Թիւրքիային, կամ բարեկամական:

Գործերի այսպիսի անորոշ դրութիւնը ի նկատի ունենալով, աւելի էլ ցանկալի է, որ կայսրայ Անգլիայի և Պրանսիայի այն միութիւնը արեւելեան հարցի պատ-

ճառով, որի մասին վերջին ժամանակները անընդհատ խօսում է եւրոպական մամուլը: Պրանսիական կառավարութիւնը պէտք է հասկանայ, թէ հէնց որ Անգլիայի կողմը կը լինի պետութիւնների մեծամասնութիւնը, Աւստրո-Ունգարիան կը միանայ այդ մեծամասնութեան հետ և կանջատվի Պրանսիայից, որը բացարձակ պաշտպանում է Թիւրքիային:

Ու թէ ինչնայից, այլ Փարիզից է կախված արեւելեան գործերի ապագայ ընթացքը: Ի դուր չէ, որ վերջին օրերում «Times» լրագիրը անընդհատ պնդում է, որ Անգլիան այն ժամանակ միայն կարող է գործնական ազդեցութիւն ունենալ յունական խնդրի լուծման ժամանակ, երբ Պրանսիան նրա հետ համաձայն կը գործէ: Երբեք կը հասկանայ Բարոտելի Սենտ-Պիեր այս ակնարկութեան ների նշանակութիւնը և կը կարողանայ արդեօք նրանցից սղուտ քաղել իր նախորդի սխալները օգտելու համար:

ԹԻՒՐԿ. ՄԱՍԿՈՒԼԸ

Օսմանը անուն Պրանք-Թիւրք լրագրիւր վերջին թուոյն մէջ բարենորոգմանց վրայ յօդուած մը հրատարակելով, Տէպա լրագրին նոյն խնդրոյն զոհած մի յօդուածն հերքել կուզէ, և հետեւեալ տողերը կը գրէ, որք ուղղակի Հայոց կը վերաբերին:

«Տէպայի խորհրդածութեանց մէջ յիշված յօդուածն Հայաբնակ դաւադար խօսքը կրնէ. բայց Հայք ամեն տեղ ցրուեալ են. Փոքր Ասիոյ, Ինչպէս նաեւ Աւստրիական Թուրքիոյ և Ալգիւրիոյ մէջ Հայեր կը տեսնուին: Ուրեմն միայն Հայաբնակ դաւադար համար բարենորոգումներն խնդրել անտեղի և անիմաստ բան մ'է: Ասկից զատ, միթէ Հայք Թուրքիոյ մէջ բնակող միակ քրիստոնեայներն են, և ի նպատակ Հայոց յանկարծ ցոյց տրուած այս համակրութիւնն ո՛չ միայն Իսլամներն, այլ նաեւ Աւստրիոյ միւս քրիստոնեաները չը կրնան դժգոհացնել:

Այլ թէ առկա խնդիրները չեն բաւարարելով վերածնութիւնն արդիւրեւ, ահա տակի Հայկական խնդրի մ'ալ կը սպառնան մեզ, որ արուստաբար երեւան հանուած է: Բայց չը մտածուիր թէ այդպիսեւ փոխանակ Հայոց վեճակը բարւոքելու, առաւել ևս կը ծանրացնեն զայն. զի երբ խնդրի մ'ես առկա կը մնայ, առաւել ևս երկարաձգի այն տաղանայն, որ բարգաւաճման և նիւթական բարեկեցութեան ամեն աղբիւր կը ցամքեցնէ:

Ասկէ առաջ, երբ Հայք նուազ ծանուած էին Աւստրիոյ մէջ, երբ իրենք իսկ նուազ հակամէտ էին այս օրուան յեղափոխական գաղափարաց, յայնժամ լաւագոյն կացութիւն մ'ունէին: Տէրութեան բոլոր հասարակային և անհատական ելեւմուտքն իրենց ձեռք էին: Իրենց ձեռքն էր այսօր երկրին ամենամեծ սեզանաւորները լինել. բայց երեւակայական գաղափարներ այդ հասարակութեան երիտասարդաց մի մասին զուրկ պաշարել է վեր: Հայեր կը տեսնուին, որք արհեստից, սեղանաւորութեան և վաճառականութեան շահաւէտ ընթացքները մէկ կողմն կը թողուն իրենք զերենք քաղաքականութեան բաղդանդանքները գործելու մէջ նետուելու համար, որք վտանգաւոր են թէ երկրին ապագային և թէ իրենց, իսկ իրենք առայժմ աւելի ևս դժբաղդ կը լինին: Բազմութիւն գարերէ ի վեր անհետա-

ցած Հայաստանի հին թագաւորութեան
բեկորներն այսօր Ռուսիոյ, Պարսկաստանի
և Թուրքիոյ մէջ բաժանուել են: Ռուսիա
վերջին պատերազմին մէջ անոր մի մասն
ևս կորցնց:

Վրդարութեան ամենուն համար ալ
հաւատարմութեւն է լինի. այս է մեր սկզբ-
բունքը: Այժմ գեղձմունք և կեղծքմունք
կան, թող դադարին. անկէ լաւագոյն բան
չը կայ: Հնորհակալ կը լինին նոցա, որք
անկեղծապէս կը փափաքին մեր վերածնու-
թեան, և ամեն գեղձմունք ջնջուի միայն
կը խնդրեն, որ դաւառին մէջ որ լինի:
Բայց երբեք չը պիտի հաւանիմք որ բա-
րենորդման պատրուակաւ մեր երկիրը բա-
ժանի: Այս այնպիսի կէտ մ'է, զոր մեր
բարեկամք երբեք մոռնալու չեն մեզ
տուած խրատներուն մէջ: Պարծեմք ոչ ոք
կրնայ մեզ դէմ բարկանայ այն պատճառաւ
թէ մեր ինքնասպանութիւնը չեմք ու-
զեր:

Քրդերը յառաջիկայ ձմեռը սովեց չը մեռ-
նելու համար, կը կողպակեն թիւրքաց
Հայաստանի քրիստոնէականներին, բայց նրանց
մօտ էլ հացի մեծ քանակութիւն չը կար:
Պարսկաստանի այս տարվայ յաջող հունձքը
բաշեց քրդերին դէպի Մարպուտականի գա-
ւառները: Բոլորովին դժուար չէ նախադու-
շակել որ այդ կողպալուած դաւառներում
շուտով կը տիրէ սովը: Երկրագործ գիւղա-
ցին քաղցած կը մնայ, իսկ քուրդը նրա
աշխատութեան արդիւնքը կը տանէ Թիւր-
քիս և այս ձմեռը կը սկսէ հանգիստ
վայելել:

Քրդերին զսպելը, կամ նրանց ասպա-
տակութիւններին առաջը տանելը պարսից
կառավարութեանը մեծ դժուարութիւններ
մէջ է ձգել, զիստաւորապէս այն պատճա-
ռով որ քրդերը կանոնաւոր պատերազմ
չեն մղում, այլ որպէս աւազակների խմբեր,
տարածվել են դանազան գաւառներում:
Ս'ի տեղում ջարդում են նրանց, մի տե-
ղից հալածում են նրանց, յանկարծ յայտն-
վում են մի այլ տեղ, ուր բոլորովին չէին
սպասում: Ս'ն քաղաքներին չեն մօտե-
նում. իրանց միշտ հեռու են պահում դաշ-
տերից, ընտրում են լեռնային անմատչելի
տեղերը, ուր կանոնաւոր զօրքերի անցնելու
համար մեծ դժուարութիւններ կան:

Պարսկաստանի քրդերի դէմ անպատ-
րաստ գտնվելը պէտք է վերաբերել երկու
զխտաւոր պատճառներին. անգլիացիների Վա-
րանիստանի հետ ունեցած կռիւները և
այն միտքը, որի մասին շատ անգամ խօս-
վում էր, թէ Հերաթը պէտք է տալ
Պարսկաստանին, հրապուրեց այդ պետու-
թեանը, հարկադրելով նրան բաւական զօրք
պահել աւազակական սահմանների վրա. երկ-
րորդ պատճառն այն է, որ ռուսների Վալա-
թէքիում ունեցած արշաւանքների առի-
թով պարսիկները այժմ 35 հազար զօրք
են պահում Վաթիքաբատում և Խորասա-
նի մէջ: Այս հանդամանքները ուղարկու-
թեան առնելով, հարկաւոր էր, որ ռուս-
ները և անգլիացիք օգնէին Պարսկաստա-
նին, երբ նրանց պատճառով Մարպուտա-
կանը այժմ մնացել է առանց զօրքերի:

Այժմ քրդերի այժմեան շարժումը լինել
լով քրդական աւազակութիւն, ինչպէս
միշտ եղել է, պարսիկներին շատ հեշտ էր
ջարդել նրանց. բայց այստեղ նկատվում է
թիւրքաց կառավարութեան դադանի օ-
ժանդակութիւնը և նրա խորին քաղաքա-
կանութիւնը, որ քրդերի ձեռքով կամե-
նում է պատժել պարսիկներին: Ինչով
Պարսկաստանը արժանացաւ այդ պատժին,
— շատ դիւրին է պարզել, եթէ ի նկատի
առնենք վերջին երկու, երեք տարիների
քաղաքական անցքերը: Ռուսները պատե-
րազմ ունեցան թիւրքերի հետ, իսկ պար-
սիկները, փոխանակ մահմետական թիւր-
քերին օգնելու, հակվեցան դէպի քրիստո-
նէայ գաւառներին: Կողմը: Ռուսները այժմ
պատերազմ ունեն Թիւրքիստանի մահմե-
տականների հետ, պարսիկները դարձեալ
չեն օգնում նրանց, դարձեալ համակրում են
ռուսաց յաղթութիւններին: Անգլիացիք
կռիւներ ունեն մահմետական աֆղանների
հետ, իսկ պարսիկները չեն օգնում նրանց
և դարձեալ նպաստում են քրիստոնէայ անգ-
լիացիներին:

Ի հարկէ, մահմետական պարսիկների
այդ տեսակ հակումը դէպի քրիստոնէայ
պետութիւնները չէր կարող շատ ակնդիմ
լի լինել Թիւրքիային, որը դուռն էր
աւարկայ սկզբում երազում էր կազմել մի
համաշխարհական իսլամական միու-
թիւն աշխարհի բոլոր գաւառների դէմ,
և այդ իսկ նպատակով Վ. Պաշկի ուղար-

կվեցան սուլթանի և շէյխ-ուլ-իսլամի
չըջաբերականների միջնաւոր օրինակները
դէպի երկրագործ բոլոր ծայրերը, ուր կա-
յին Մահմադի հետեւողներ: Բայց
Պարսկաստանը միշտ իրան հեռու է պա-
հել Բ. Դրան ինտրիգաներից: Պարսիկ-
ները իրանց շէյխ աղանդով նոյնքան հա-
կառակ են սուլթանի թիւրքերին, որքան
կառաւարներին և քիւրդներին:

Օգուտ քաղելով անցեալ ձմեռվայ սո-
վեց և քրդերի այս տարվայ քաղցա-
ծութիւնից, Թիւրքիային շատ հեշտ էր
զինուորել քրդերին, թոյլ տալ նրանց կո-
ղպալել պարսից գաւառները և զրանով
յազեցնել իր վրէժխնդրութիւնը: Այսպէս
զինուորեց նա քրդերին ռուսաց պատերազմի
ժամանակ, երբ թոյլ տուեց նրանց ասպա-
տակել Հայաստանի գաւառները, արիւնով
և կրակով ծածկել Հին-Բայազէդը: Պահ-
պանել մի այսպիսի վայրենի ժողովուրդ, որ-
պէս քրդերն են, և կերակրել նրանց աւա-
զակութիւններով, — այդ կարող է անել
Թիւրքիայի նման մի աւազակ պետու-
թիւն միայն, որ յանդգնում է իրան քա-
ղաքակրթ պետութիւնների կարգում դը-
նել:

Այժմ Հազի արքունիքը Թահթանի
թիւրքաց դեսպանի հետ այն բանակցու-
թեան մէջ է, թէ քրդերին ջարդելուց յի-
տոյ տարակոյտ չը կայ, որ նրանք կը փախ-
չեն դէպի Թիւրքիա, որտեղից եկած են,
— արդեօք թիւրքաց կառավարութիւնը
թոյլ կը տա՞յ պարսիկներին անցնել թիւր-
քաց հողի վրա և յետ խել նրանց տարած
աւարը ու կողպուտը, — եթէ այդ կար-
գելով, արդեօք թիւրքաց կառավարութիւ-
նը կ'օգնէ բոլոր պատասխանատուութիւնը
իր վրա, քրդերին պատժելու և Պարս-
կաստանի կրած վնասներին բաւականու-
թիւն տալու համար: Թէ ի՞նչով
կը վերջանան այդ բանակցութիւնները,
այժմ դժուար է որոշել, միայն այսքանը
կարելի է յուշալ, որ պարսիկները շուտով
կը մաքրեն իրանց երկիրը այդ աւազակնե-
րից, իսկ ինչ որ վերաբերում է կողպա-
ված ժողովուրդին, շատ պարզ է, որ այս
ձմեռ նրանք հազիւ կարող են ապրել, ու-
րովհետեւ գիւղացիների մօտ ուտելու ոչինչ
չէ մնացել, բոլորը յաղթանակվեցաւ, բոլորը
տարվեցաւ դէպի Թիւրքիա: Առանց այդ
էլ Մարպուտականի ժողովուրդը անցեալ
տարվայ սովի ժամանակ բոլորովին աղքա-
տացել էր. այս թշուառութեան վրա աւել-
ցան քրդերի այս տարվայ ասպատակու-
թիւնները:

Վերջացնելով նամակս, աւելորդ չեմ հա-
մարում ուղարկութիւն դարձնել Թիւրքիա-
յի և մի ուրիշ քաղաքագիտութեան վրա,
որից նա զոնէ կարող է ժամանակաւորա-
պէս շահվել: Այժմ թիւրքաց Հայաստա-
նում կազմվում է հայերի և մահմեդական-
ների նոր վիճակագրութիւն: Մահմետա-
կան մի խոշոր մեծամասնութիւն ցրց տա-
լու համար թիւրքաց կառավարութիւնը
աշխատում է գործ դնել ամեն հնարներ:
Տարակոյտ չը կայ, երբ պարսիկները կը
վառեն իրանց երկիրը քրդերին, նրանց
հետ կը փախչեն դէպի Թիւրքիա և
պարսկահպատակ քրդերը, որոնք ապստամբ-
վեցան իրանց կառավարութեան դէմ, և
այդ բոլորին թիւրքաց վիճակագրները կը
հաշվեն, որպէս իրանց հպատակներ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՈՅԵ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՅ, 25 հոկտեմբերի:
Երբ Մարտի, հոկտեմբերի 25-ին հասան Ս.
Պետերբուրգ միսիսար Սարգսի և Փրան-
սիական դեսպան Հանգի:

ԼՕՆԻՕՆ, 25 հոկտեմբերի: Պրան-
ցիքի նաւատորմը հրաման ստացաւ ուղեոր-
վել երեքշաբթի դէպի իրանդական ափերը:
Իրանդական կառավարական միութիւնը մի
չըջաբերական հրատարակեց, որով հրա-
ւիրում է ժողովուրդին նուիրատուութիւն
ներ տալ պաշտպանողական դուժար կազ-
մելու համար:

ԹԷԼԻՄԵՆ, 24 հոկտեմբերի: Երբ Մարտի
կարգը թողեց քիւրդերին:

ՖԵԼԻՊՊՕՊՈԼ, 25 հոկտեմբերի:
Այսօր յայտնվում է Տ. Սիբուրգային ըս-
պանողների դատավճիռը. երկու չեքսօգոր-
ցիներ դատապարտված են մահուան պատ-
ժի, մի մակեդոնացի տաժանակիր աշխա-
տանքների 12 տարի ժամանակով, Ռազ-
ախի եղբայրը բանտարկութեան 16 տա-
րով:

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՅ, 25 հոկտեմբերի:
Առաւարտական հաղորդութիւն. հոկտեմ-
բերի 23-ին կոմս Լորիս-Մելիքով, Ախա-
նով, Երազա և Ալաւեով սկզբնական խոր-
հուրդ ունեցին տաղաքական օրէնքները վե-
րաքննելու մասին: Հետեւեալ խորհուրդը,
որին կը մասնակցեն առանձին խորհուրդի
բոլոր անդամները, կը կայանայ հետեւեալ շա-
բաթվայ մէջ: Գլխաւոր ինտենդանտութիւ-
նը տալիս է քաղաքին 35,000 կուլ (Չուպ)
այլու, այն պայմանով, որ քաղաքը 1881 թուի
յուլիսին վերադարձնէ բոլորը: Դուան 30000
րուբլու կրեդիտ բաց արաւ հաց գնելու հա-
մար: „Берегъ“ լրագիրը տպել է քաղա-
քական յանցաւորների հետեւեալ աղգա-
նունները, որոնց գործը այսօր է քննվում:
1) աշուական Լէքսանդր Ալիստիպի
2) Ալադիմիր Գրիգօ, 3) Նիկոլայ Բուխ,
4) Բուլիչ, 5) Օկարսիկ, 6) Օւրբով-
սիկ, 7) Հիւստի, 8) Տիւսով, 9) Մար-
տինովսիկ, 10) Արիստիսիկ, 11) Օւն-
գելիկ, 12) Տուկերման, 13) Պրիստեա-
կով, 14) Նիկոնիա Ֆիդեր, 15) Գեղ-
ջուհի Գրեմուովա, 16) Սոֆիա Իվա-
նովա:

ԲԵՐԼԻՆ, 24 հոկտեմբերի: Դեր-
վիշ-փաշա երեք բաւալիսի զօրքերով հա-
սաւ Ս'ետույի և սկսեց բանակցել այլաւա-
կան միութեան երեք առաջնորդների հետ,
հրաւիրելով նրանց ենթարկվել սուլթանի
կամքին: Այլաւալիսները յոյս ունեն, որ
Դերվիշ-փաշա չեքսօգորցիներին թշնամի
լինելով կարգելի Գուլցինի օգնելուն:

ՓԵՐՏԻՆ, 24 հոկտեմբերի: Լիւսից և
Նանտից հազար միաբանութիւններին ար-
տաքննու ժամանակ կատարեալ խռովութիւն
պատահեց: Կաթի ժամանակ մի մարդ է սպան-
ված:

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՅ, 24 հոկտեմբերի:
Պրեմիալի հեռագրում է Ռուզա-
յից Ախալայի կողմից հոկտեմբերի 20-ից
ներկայ դարունքին և ամառը հետախուզե-
ցի վերին Խուս-խէյի և Աուկուիւր լճի
աւազանները: Այսպէս Ալաւից և միջին
Գորից Որգա: Ճանապարհորդութիւնը
վերջացած է: Բնակներ անցել են
7,200 վերսա: Գլխաւորական հարուստ հեռու-
ւանքներ ստացայ:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՓԵՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ եռամսեայ պատկերազարդ հանդէսն կը հրատարակուի ի 1881 թուականին չորս անգամ, այն է՝ Յունուարին, Ապրիլին, Յուլին և Օկտեմբերին: Արա իրաքանչիւր տարը կը պարունակէ իւր մէջ 3—4 քառաձալ թերթ 12—16 պատկերներով նոյն ձեով, ինչպէս հրատարակուեցաւ մինչև ցայսօր:

ՓԵՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդէսի նիւթն, ուղղութիւնն, տպագրութեան գեղեցկութիւնն և պատկերաց ընտրութիւնն կը փնտրենք միշտ պէս էին մինչև ցայսօր:

Տարեկան բաժանորդագրութեան գինն, հանդերձ առաքմամբ, է 5 ռուբլի կանխիկ վճարելի: Խմբագրութեան հասցէն այս է. *Москва, Меньшикова башня, домъ Милованова, Ея Превосходительству Издательному армянскаго журнала „Маякъ Арменій“, Софійа Мсерианцъ.*

Ուսանողները Հայք կարող են բաժանորդ գրուիլ բաց ի խմբագրութենէն՝ նաև ներկայ ամի պատուէլի գործակալաց մօտ, ևս է ի Տփլիսի՝ Կենտրոնական և Օ. Գրիգորեանցի գրախճառանոցներում, և յերևան՝ Պ. Երզար Գուլամիրեանցի մօտ:


Եթէ «ՓԵՐՈՍ» 1880 ամի պատուէլի բաժանորդքն բարհաճին նորոգել իւրեանց բաժանորդագրութիւնը և առաջիկայ 1881 տարւոյ համար մեր հանդիսի հրատարակութիւնն ապահովուած կը լինի:

ՀԱՅԱՍՏԱՆԻՉ ՍՈՓԻՍ ՄՈՆԵՏԱՆՅ

8—10

ՊԵՏԻ ՈՒՆԻՄ ՅԱՅՏԱՆԵԼ ԹԻՓԼԻՍԻ յարգելի հասարակութեանը, մանաւանդ ԹԻՓԻ-ԲԵՅ ԲՆԵԿԵՆ ԾԻՍԼԻՍՏՐ սիրողներին, որ ներկայ ամսկայ մէջ ծխախոտի մեր ԳՈՐԾԵՐԵՆԻ մէջ ստացված են Թիւրքիայից ԵՄԵՆԵԼԵՐԶՐ յատկութիւններէ ԾԻՍԼԻՍՏԵՐԻ, այսինքն՝ ԵՆԻՔԻՕ ԿԷՕ ԲԷԿ ԳԵՐՄԻՋԱՆ ԲԵՍՄԱ, ՀՈՒՄԱ, ԲԱՔԻՍ և ՍԵՄՍՕՆ ամենաբարձր տեսակից: Յիշեալ ծխախոտները միայն ՊԵՏԻՍԻՐՈՂՆԵՐԻ համար կը պատրաստուին: ԳԻՆԵ 1 ֆոնտէն համար ՎԵՅ ՏԵՍԵԿՆԵՐԻՅ 4, 5, 6, 8, 10 և 12 ռ., մի ֆոնտէն ՍԵՄՍՕՆԻ ԾԻՍԼԻՍՏԵՐ արժէ 3, 4 և 5 ռ., պ. պ. գնողներին խնդրում եմ իրանց ՊԵՏԻՍԻՐԵՐՈՂ, ԳԻՄԵԼ ծխախոտի իմ ԽԱՆՈՒԹԵԼ, որ գտնուի է ԳՎՕՐՅՕՎ ԵՅԵ փողոցի վրա, ԵՐԾԻՐՈՒՆՈՒ տանը № 1: ՕՏԵՐԵՐԵԼԵՐԵՐԻ պարոններին խնդրում եմ պատուէրներ ՆԵՄԱԿՆԵՐՈՎ և ՓՈՂ ուղարկել պատուէրներ համեմատ: Պատուէրները անյապաղ կը կատարվեն և կուղարկվեն առաջին ՓՕՍՏԱՅՈՎ:


Գործարանատէր Ն. ԲՕՂԵՐՅԱՆԵՆՅ



Կ. ՊԱՆՅԵՐ

ԵՏԵՄԵՆՍԿԵՅԵ ՓՈՂՈՑ

Մուկ ՕՂԵՐԱԼԻՔ: Եկող ձեռնակայ սեղծի համար առաջարկուում են պատուէրներ հասարակութեանը ՄԵՐ ԲԵՆԵԿՈՒԹԵՐՈՒ ԶԵՆՔԻ և ՈՏԻԻ կարի ՄԵՐԵՆԵՆԵՐԻ, եւրօպական առաջնակարգ ԳՈՐԾԵՐԵՆԵՐԻՅ ամենանոր ԶԵՆԵՐԻ չափազանց էժէ՛՛՛ն գներով, այսինքն Զեռքի մեքենաներ 12—15 ռուբլ: խմբի 50—80 ռուբլ:



18—52

ՕՐԵՑՈՅՑ 1881 թ.

Ո. Յ. Տէր-Երամեանցի, գինն է 15 կօպէկով:

Վաճառվում է Օւքարեան Գրիգորեանցի Վաճառատան գրախճառանոցում Տփլիսի:

3—20

Ֆ. Կ. ՉԱՄԼԵՆՍԿԻՐ ԳԵՂԱՍՏԵՆ ԿԻՑ ՄԻՆԱՍԻՔԻՍԿԻ ՓՈՂՈՑ Տ. ԿՍՏԻՆԻ: Ամենայն օրը ըն ԳՈՐԾԵՐԵՆԻՄ ԵՆ առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը ներքին, երեկոյեան, ջղային, վնասական և կաշու հիւանդութիւններ ունեցող ՀԻՍԵՆԵՐԵՐԸ

6—6

Գուրս եկան մամուլի տակից և վաճառվում են ԿԵՆՏՐՕՆԻԿԱՆ և Օ. ԳՐԻԳՐԵԱՆԵՆԵՐԻ գրախանութներում Ս. Մանդրինեանի հետեւեալ դասագրքեր.

1) Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տառւայ ուսմունք և ընթերցմունք) . 25 կ.

2) Նոյնը ուսուցիչներին համար բացատրութիւններ և ընթերցմունք) 75 կ.

3) Ազգային Գիւցազնա կանաչ խարհ (բ. տառւայ ուսմունք և ընթերցմունք) 30 կ.

4) Նա հապետական և հայրենի աշխարհ (բ. տառւայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) 65 կ.

ОБЪ ИЗДАНИИ

въ 1881 году въ г. Тифлисъ еженедѣльнаго русскаго юридическаго журнала

„СУДЕБНЫЕ ПОРЯДКИ“

Журналъ „Судебные Порядки“ будетъ выходить съ января 1881 года по воскресеньямъ, въ объемѣ не менѣе двухъ листовъ небольшого формата, подъ редакціею присяжнаго повѣреннаго округа Тифлисской судебной палаты Александра Ивановича Карабекова, по слѣдующей программѣ:

ПРОГРАММА

еженедѣльнаго юридическаго журнала „Судебные Порядки“

- 1) Передовыя статьи, заключающія въ себѣ общіе взгляды на состояніе правосудія въ судахъ гражданскихъ и положительнаго законодательства.
- 2) Судебные процессы, имѣющіе общественный интересъ.
- 3) Юридическія замѣтки и изслѣдованія, имѣющія предметъ обсужденіе общихъ началъ права, отдѣльныхъ законоположеній, мѣстныхъ обычаевъ, судебныхъ рѣшеній, опредѣленій и т. п.
- 4) Юридическія извѣстія, заключающія въ себѣ свѣдѣнія о явленіяхъ общественной жизни, имѣющихъ юридическій интересъ.
- 5) Библиографическія извѣстія, заключающія въ себѣ свѣдѣнія о вновь выходящихъ юридическихъ сочиненіяхъ.
- 6) Офіціальныя извѣстія, содержащія въ себѣ свѣдѣнія о новыхъ законоположеніяхъ, распоряженіяхъ правительства, движенія по службѣ, судебныя указатели и резолюція по дѣламъ, назначеннымъ къ слушанію въ Тифлискомъ окружномъ судѣ и Тифлисской судебной палатѣ.
- 7) Фельетонъ: а) полемическія статьи, не имѣющія характера передовыхъ статей, и б) отдѣльныя мелкія статьи юридическаго характера, не вошедшія въ составъ предыдущихъ отдѣловъ.
- 8) Объявленія.

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ съ доставкою въ Тифлисъ и пересылкою въ другіе города Россіи семь рублей, на полгода, для подписчиковъ г. Тифлиса четыре рубля, для иногородныхъ четыре рубля пятьдесятъ коп., по почтовому союзу—на годъ десять руб.; отдѣльныя нумера по двадцати коп.

Подписка принимается: въ Тифлисъ: до 1 декабря сего года въ квартирѣ редактора, на Кюджурской улицѣ, домъ № 8, а съ 1 декабря въ помѣщеніи редакціи—въ пассажѣ каравансарая Таманшевыхъ, на Эриванской площади, въ г. Елисаветполѣ—уполномоченнымъ при управленіи государственными имуществами Р. И. Карабеговымъ, въ г. Кутаисѣ—присяжнымъ повѣреннымъ М. А. Кикодзе, въ г. Эривани—присяжнымъ повѣреннымъ В. И. Егіазаровымъ.

Редакторъ-издатель **А. КАРАБЕГОВЪ.**

(10) 2.

ՄԻ ՕՐԻՈՐԻ, որ ուսում է ստացել Փարիզում և Լոնդոնում, տալիս է Փրանսերէն և անգլերէն լեզուների դասեր: Հասցէն Սապէրնայա փողոց, № 37:

2—6

Ծախվում է մի կՏՈՐ ՀՈՂ 400 քառակուսի սաճէն կուր դեռի երկրորդ անցքի մօտ, իւրաքանչիւր սաճէնը 25 ռուբլով: Հարցնել Միխայիլ օկուպայա փողոցի վրա, Գուրգէնեկովի տանը, № 5:

2—5

ԲԵՐԼԻՆԻ ՆՈՐԱԶԵՆԻ ԲԵՂԵՐ ԲԵՅՈՒԼՈՒ է ներկայ տարվայ հոկտեմբերի 15-ից, Սոլովակի, Գանուկայա փողոց, տ. Գոնչարովայի խանութից վերև, կիսեալ Բերուլովի տանը №2 և 3: Այդտեղ կարելի է ստանալ մեծ քանակութեամբ կանանց և երեխաների նորաձե հագուստներ, ինչպէս բոտոնիզներ, դօլոմոններ, զանազան տեսակի պալտօններ և մեծ քանակութեամբ կանանց և երեխաների նորաձե գլխարկներ և նրանց պատկանելիք: Նոյնտեղ կարելի է գտնել զանազան նկարների դրապներ, կատարել թաւիշ (մախմուր): Ընդունվում են նոյնպէս ամեն տեսակ պատուէրներ: Գները ամենաչափաւոր են:

1—10

ՎԱՐՃՈՒՄԻ ԲՈՒՅԵՎԻՉ ԴԵՍԵՐ է փնտռում և պատրաստում է երեխաներին բոլոր ուսումնարանների համար: Հասցէն կարելի է իմանալ ԷՆՅԻՆԵՆԵՆՅԻ գրախճառանոցի մէջ:

1—3

Մինչև առաջիկայ 1881 թիւ յունվար ամիսը ՇՈՒՇԻ քաղաքում կը տպագրվեն առանձին գրքով լըս կը տեսնի ԲԱՅԻԻ «ԽԵՆԹԵՐ» անունով վեպատանութիւնը: Տպագրութիւնը կը լինի գեղեցիկ և մաքուր թղթի վրա: Իւրաքանչիւր գրքի գինը կանխապէս բաժանորդ գրողներին համար նշանակվում է 1 ռուբլի: Իսկ տպագրութիւնից յետոյ գնողների համար գինը կը բարձրանայ: Պ. պ. բաժանորդները թող բարհաճին իրանց վճարը ուղարկել այս հասցէով. ՍՊՈՒՆ. ԱՅԵԼԻՅՈՒ ԴԱՎԻԴՈՎԻՉՍԻ ԱՐԵՏԻԱՆՍԻՍ. ՎԵՐ ԿՈՆՏՐԻՔ ԲՐԱՆԻԱՆՑԱ.

Հրատարակիչ ԱՐԵՆԻ Գ. ԱՊՐԵՍԵԱՆՅ

5—10

Գուրս եկաւ մամուլի տակից «Մանկական ձայնագրեալ երգարան» խմբագրութեամբ Եգիպէի քահանայի Երզնկեանց: Հրատարակութեամբ Օ. Գրիգորեանցի: Ընդունուած է Ներսիսեան դպրանոցում և թեմական վերառեսչի բարեհաճութեամբ Տփլիսի բոլոր ուսումնարաններում: Վաճառվում է բացառապէս Օ. Գրիգորեանցի Վաճառատան գրախճառանոցում. գինն է 40 կ., գումարով առնողներին զիջում կը լինի:

7—10

ՍՏԱՅՎԱՆ ԵՆ տղամարդկերանց, կանանց և երեխաների ԿԱՍՏՐԻ ՇԼԵՍՈՎՆԵՐ ԵՆԳԼԵՍԻՆԵՐ և այլ նորաձե ապրանքներ արտասահմանի նորաձե պահեստի մէջ, որ գտնվում է ԳՎՕՐՅՕՎՍԿԻ փողոցի վրա ՍԱՐԱԶԵՎԻ ԵՆ ԵՐԿԱՆՈՎԻ տանը ՎԵՐԵՆ ՏԱՐԿԻ մէջ, Գիրգորի վարչական ուսումնարանների խանութի վերև: ՄՈՒՏԻՔ ԲԱՅԻՅ: Տղամարդկերանց ՇԼԵՍՈՎՆԵՐ 2 ռ. 55 կ-ից և աւելի թանգ:

Մերոն Գուլամիրեանց

6—10